լուծութեան ենթարկուող բովանդակութիւն են առնում, պաշարում են մեր անհատականութիւնը, կլանում մեր թափը, եւ սակայն, բուն իրականութիւնը՝ ներուժ համադրութեան եւ ստեղծագործական անտեսանելի թռիչքը՝ մընում է հեռու:

* * *

Կաղամախիների վրայ արագիլների մեծ բոյները դատարկ են: Մերկացած ճիւղերը մխրճուել են սառը լոյսի մէջ: Այդիների դրոների վրայ մեծ փայտեր են դամել: Ամէն ինչ փակ է: Թաղուած որթերը հրաժեշտ են տուել լոյսին ու երկար ամիսներ պիտի պատրաստուեն ծլարձակման տօնին: Պիտի ներկայանան արեւին զուարթ, բեղմնաւորուած, պատրաստ իրենց ճակատագիրը իրականացնելու համար:

Վաղը, երբ վերադառնայ գարունը, երբ Արարատը վար ձգէ իր բիւրեղեայ պատմուճանը եւ Գեղամայ լեռների վրայից բոցեռանդ հովեր անցնեն, հողի տակ արմատները պիտի խենթանան, հիւթերը եւ աւիշները պիտի եռան, սերմերը պիտի պայթին, ու ամէն ինչ պիտի ծաղկի, լեցուի կեանքով, մագլցի արեւի ճառագայթների վրայ եւ բացուի երփներանգ գոյներով:

Իսկ մեր այդին դեռ թաղուած է: Հայ ոգու որթենին ծածկուած է հողով: Դուռն վրայ խաչաձեւուած փայտեր են դամուած: Ամէն ինչ փակ է:

Մեր ենթագիտակցութեան մէջ ծփում են հակասական ուժեր, եւ մեր խմացականութիւնը՝ կամ հողմերի դէմ պայքարող թոյլ թեւեր է պարզում կամ ուրիշի բոյնի մէջ իր հաւկիթներն է դեռեղում:

Դարերի միջից, մենք անցնում ենք պատմութեան կոպճուտ ճանապարհների վրայից, արիւնած, չարչարուած ոտքերով, եւ չենք հասնում մեր իրականութեան, մեր սեփական, հոգեկան աշխարհին:

Եւ սակայն, եթէ քարը նետես անդունդի մէջ՝ արձագանգները կ'արթնանան:

Բայց անդունդին պէտք է կարողանալ մօտենալ: Ահա ամբողջ հարցը դրա մէջ է: Գտնել ըմբռնողութեան հարազատ ձեւը ու մօտենալ՝ առանց որ գլուխդ պտտի եւ աչքերդ սեւանան:

Մօտենալ մերկ սրտով եւ պայծառ աչքով:

Մեր ամենամեծ թշնամիները խմաստակներն եղած են: Դէշ պարտիզպանները: Նրանք, որ ուրիշների աչքերն են փոխ առած, որովհետեւ չունին սեփական աչք, ուրիշի սիրտը, որովհետեւ չունին սեփական սիրտ, ուրիշի խելքը, որովհետեւ չունին սեփական խելք:

Այդ այլեւս պարզ է: Պարզ է, որ մենք ոչ մեր պատմութիւնով, ոչ մեր ճակատագրով եւ ոչ մեր «աւանդական բովանդակութիւնով» ուրիշ ժողովուրդներին չենք նմանում: Լաւ ենք թէ վատ ենք, չգիտեմ, բայց այդպէս ենք:

Մինչ, ահա —

Կշիռքը եւ չափը բռնած, իջել են փոքրիկ մարդիկ, արտասանում են գիտութեան վերջին խօսքերը, խմացականութեան վերջին գիւտը, փիլիսոփայութեան վերջին ճշմարտութիւնը եւ ուզում են չափել անդունդը, կշռել արձագանգը:

* * *

Արժէ՞ գնալ Էջմիածին:

Պատմում են, որ մի մարդ, լուսաբացին, ճանապարհ էր ընկել իր նշանածի մօտ գնալու համար: Նշանածը ապրում էր հեռաւոր մի գիւղում, մեծ, խիտ անտառի միւս ծայրում:

Գնում էր մարդը երազելով, ուրախ, սիրով լեցուն: Նրան սպասում էր սիրած աղջիկը, կանացիութեան աստուածային արտայայտութիւնը, երջանիկ նպատակը: Նա ամբողջովին սէր էր եւ յոյզ, ու սիրտը բացել էր իր թեւերը ամբողջ աշխարհը ընդգրկելու համար: Ի՞նչ բախտաւոր ճամբորդութիւն: Ահա նա, իր մեծ եւ պայծառ աչքերով, իր ճառագայթող երկար վարսերով, հրեշտակային դէմքով՝ արեւային, համեստ, սուրբ:

Մինչ մարդը երազում էր այդպէս, մէկ էլ տեսաւ, որ իր սիրած աղջիկը մեղմաձեմ գընում է իր հետ: Զարմացաւ եւ հարցրեց.

— Ինչպէ՞ս է որ դու այստեղ ես, ի՛մ սիրելիս:

— Նշանածդ,— պատասխանեց աղջիկը,— սպասում է քեզ իր տանը:

— Ուրեմն դու չե՞ս այն, որին ընտրած եմ իրը իմ երջանկութեան նպատակը:

— Նշանածդ քեզ սպասում է իր հօրը տանը, իսկ ես այն եմ, որին սիրում ես եւ գալիս եմ քեզ հետ:

Մարդը չփոթուած եւ զարմացած չէր կարողանում իրեն բացատրել այս տարօրինակ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան